



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սր Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email: info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,

28TH May 2017

Bulletin No 23/17

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 23:12-35

Երբ առտու եղաւ, Հրեաներէն ոմանք միաբանեցան եւ նգովեցին իրենք զիրենք, ըսելով թէ ո՛չ պիտի ուտեն, ո՛չ ալ խմեն՝ մինչեւ որ սպաննեն Պօղոսը: Այս երդումը ընողները քառասունէ աւելի էին: Անոնք գացին քահանայապետներուն ու երեցներուն, եւ ըսին. «Սաստիկ նգովեցինք մենք մեզ, որ ո՛չ մէկ բան ճաշակենք՝ մինչեւ որ սպաննենք Պօղոսը: Ուստի դուք հիմա՝ ատեանին հետ՝ խնդրա՛նք յայտնեցէք հազարապետին, որ վաղը իջեցնէ զայն ձեզի, իբր թէ կուզէք աւելի ճշգրիտ տեղեկութիւն ունենալ անոր մասին. իսկ մենք՝ անոր մօտենալէն առաջ՝ պատրաստ ենք սպաննել զայն»:

Բայց Պօղոսի քրոջ որդին՝ լսելով այս դարանակալութիւնը՝ գնաց, մտաւ բերդը, ու պատմեց Պօղոսի: Պօղոս ալ կանչեց հարիւրապետներէն մէկը եւ ըսաւ. «Տա՛ր այս երիտասարդը հազարապետին, որովհետեւ լուր մը ունի՝ տալու անոր»: Ան ալ առաւ զայն, տարաւ հազարապետին եւ ըսաւ. «Բանտարկեալ Պօղոսը կանչեց զիս ու խնդրեց՝ որ բերեմ քեզի այս երիտասարդը, քանի որ ըսելիք ունի քեզի»: Հազարապետը անոր ձեռքէն բռնելով՝ մէկդի քաշուեցաւ եւ հարցուց. «Ի՞նչ լուր ունիս՝ տալու ինծի»: Ան ալ ըսաւ. «Հրեաները միաձայնեցան թախանձել քեզի՝ որ վաղը ատեանին առջեւ իջեցնես Պօղոսը, որպէս թէ կուզեն աւելի ճշգրտութեամբ հարցաքննել զայն: Բայց դուն մտիկ մի՛ ըներ անոնց, որովհետեւ անոնցմէ քառասունէ աւելի մարդիկ դարան մտած են անոր համար, եւ իրենք զիրենք նգոված՝ որ ո՛չ ուտեն, ո՛չ ալ խմեն, մինչեւ որ սպաննեն զայն. ու հիմա պատրաստ են, եւ կը սպասեն քու խոստումիդ»: Հետեւաբար հազարապետը արձակեց երիտասարդը՝ պատուիրելով անոր. «Ո՛չ մէկուն ըսէ թէ այս բաները յայտնեցիր ինծի»:

Ապա կանչելով հարիւրապետներէն երկուքը՝ ըսաւ. «Պատրաստեցէ՛ք երկու հարիւր զինուոր, եօթանասուն ձիաւոր ու երկու հարիւր գեղարդաւոր, որպէսզի երթան մինչեւ Կեսարիա՝ զիջերուան երրորդ ժամուն՝. նաեւ հայթայթեցէ՛ք զքրաստներ, որպէսզի հեծցնեն Պօղոսը եւ ապահովութեամբ տանին Փելիքս կառավարիչին»: Նամակ մըն ալ գրեց՝ սա՛ տիպարին համաձայն.

«Կողոզիոս Լիւսիաս՝ պատուական Փելիքս կառավարիչին. ողջո՛ յն:

Այս մարդը բռնուած էր Հրեաներէն եւ պիտի սպաննուէր անոնցմէ. իսկ ես վրայ հասայ զօրքերով եւ ազատեցի զայն, հասկնալով որ Հռոմայեցի է: Ուզելով զիտնալ պատճառը՝ որուն համար կամբաստանեին զինք, տարի զինք անոնց ատեանին առջեւ, եւ գտայ թէ ամբաստանուած էր իրենց Օրէնքին վերաբերեալ հարցերու համար, բայց մահուան կամ կապերու արժանի ո՛չ մէկ յանցանք ունէր:

Երբ տեղեկացայ թէ Հրեաները կը դաւադրեն այդ մարդուն դէմ, անյապաղ դրկեցի քեզի, պատուիրելով ամբաստանողներուն ալ՝ որ խօսին քու առջեւ անոր դէմ: Ո՛ղջ եղիր»: Զինուորներն ալ առին Պօղոսը եւ զիջերուան մէջ տարին Անտիպատրոս, իրենց հրամայուածին համաձայն: Հետեւեալ օրը՝ թողուցին ձիաւորները որ երթան անոր հետ, իսկ իրենք վերադարձան բերդը: Անոնք ալ մտան Կեսարիա, տուին նամակը կառավարիչին ու ներկայացուցին Պօղոսը անոր: Երբ կարդաց, հարցուց թէ ո՞ր գաւառէն է, եւ հասկնալով թէ Կիլիկիայէն է՝ ըսաւ. «Մտիկ պիտի ընեմ քեզի՝ երբ գան քեզ ամբաստանողներն ալ»: Ու հրամայեց որ պահեն զայն Հերովդէսի պալատին մէջ:

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

Acts 23:12-35

A Conspiracy to Kill Paul

When it was day, the Jews formed a conspiracy and bound themselves under an oath, saying that they would neither eat nor drink until they had killed Paul. There were more than forty who formed this plot. They came to the chief priests and the elders and said, "We have bound ourselves under a solemn oath to taste nothing until we have killed Paul. "Now therefore, you and the Council notify the commander to bring him down to you, as though you were going to determine his case by a more thorough investigation; and we for our part are ready to slay him before he comes near *the place*."



Paul before council

But the son of Paul's sister heard of their ambush, and he came and entered the barracks and told Paul. Paul called one of the centurions to him and said, "Lead this young man to the commander, for he has something to report to him." So he took him and led him to the commander and said, "Paul the prisoner called me to him and asked me to lead this young man to you since he has something to tell you." The commander took him by the hand and stepping aside, *began* to inquire of him privately, "What is it that you have to report to me?" And he said, "The Jews have agreed to ask you to bring Paul down tomorrow to the Council, as though they were going to inquire somewhat more thoroughly about him. "So do not listen to them, for more than forty of them are lying in wait for him who have bound themselves under a curse not to eat or drink until they slay him; and now they are ready and waiting for the promise from you." So the commander let the young man go, instructing him, "Tell no one that you have notified me of these things."

Paul Moved to Caesarea

And he called to him two of the centurions and said, "Get two hundred soldiers ready by the third hour of the night to proceed to Caesarea, with seventy horsemen and two hundred spearmen." *They were* also to provide mounts to put Paul on and bring him safely to Felix the governor. And he wrote a letter having this form:

"Claudius Lysias, to the most excellent governor Felix, greetings.

"When this man was arrested by the Jews and was about to be slain by them, I came up to them with the troops and rescued him, having learned that he was a Roman.

"And wanting to ascertain the charge for which they were accusing him, I brought him down to their Council; and I found him to be accused over questions about their Law, but under no accusation deserving death or imprisonment.

"When I was informed that there would be a plot against the man, I sent him to you at once, also instructing his accusers to bring charges against him before you."

So the soldiers, in accordance with their orders, took Paul and brought him by night to Antipatris. But the next day, leaving the horsemen to go on with him, they returned to the barracks. When these had come to Caesarea and delivered the letter to the governor, they also presented Paul to him. When he had read it, he asked from what province he was, and when he learned that he was from Cilicia, he said, "I will give you a hearing after your accusers arrive also," giving orders for him to be kept in Herod's Praetorium.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 20-29 21-17

Երբ անոնք դուրս ելան Երիթրովէն, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ անոր: Եւ ահա՛ երկու կոյրեր նստած էին ճամբային եզերքը. երբ լսեցին թէ Յիսուս կանցնի, աղաղակեցին. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի՛ Որդի»: Բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք՝ որ լռեն, բայց անոնք ա՛լ աւելի կ'աղաղակէին. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի՛ Որդի»: Յիսուս կանգ առնելով՝ կանչեց զանոնք եւ ըսաւ. «Ի՞նչ կուզէք որ ընեմ ձեզի»: Ըսին անոր. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գթալով՝ դպաւ անոնց աչքերուն. իսկոյն անոնց աչքերը բացուեցան, ու հետեւեցան անոր:

Երբ մօտեցան Երուսաղէմի ու հասան Բեթփազէ, Ձիթենիներու լերան մօտ, Յիսուս դրկեց երկու աշակերտ՝ ըսելով անոնց. «Գացէ՛ք այդ ձեր դիմացի գիւղը, ու իսկոյն պիտի գտնէք կապուած էջ մը, եւ անոր հետ՝ աւանակ մը. արձակեցէ՛ք զանոնք ու բերէ՛ք ինձի: Եթէ մէկը բան մը ըսէ ձեզի, ըսէ՛ք. "Տէրոջ պէտք էն", եւ իսկոյն պիտի դրկէ զանոնք»: Այս ամէնը կատարուեցաւ, որպէսզի իրագործուի

3: List of the Feasts celebrated in the Armenian church

մարգարէին միջոցով ըսուած խօսքը.

«Ըսէ՛ք Միոնի աղջիկին. “Ահա՛ Թագաւորդ կու գայ քեզի, հեզ եւ հեծած իշու վրայ, իշու ձագի՛ աւանակի վրայ”»:

Աշակերտները գացին, եւ ըրին ինչպէս Յիսուս պատուիրած էր իրենց. բերին էջն ու աւանակը, դրին անոնց վրայ իրենց հանդերձները, եւ նստաւ անոնց վրայ: Ահագին բազմութիւն մը փռեց իր հանդերձները ճամբային վրայ. ուրիշներ ճիւղեր կը կտրէին ծառերէն ու կը տարածէին ճամբային վրայ:

Եւ առջեւէն գացող ու իրեն հետեւող բազմութիւնները կ'աղաղակէին. «Ովսաննա՛ Դաւիթի Որդիին: Օրհնէա՛ լ է ան՝ որ կու գայ Տէրոջ անունով: Ովսաննա՛ ամենաբարձր վայրերուն մէջ»:

Երբ ան մտաւ Երուսաղէմ, ամբողջ քաղաքը շարժեցաւ եւ ըսաւ. «Ո՛վ է ասիկա»: Բազմութիւնը ըսաւ. «Ա՛յս է Յիսուս մարգարէն՝ Գալիլեայի Նագարէթէն»:

Յիսուս մտաւ Աստուծոյ տաճարը, դուրս հանեց բոլոր անոնք՝ որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին, եւ տապալեց լուսայափոխներուն սեղաններն ու աղանի ծախողներուն աթոռները, եւ ըսաւ անոնց. «Գրուած է. “Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի”, բայց դուք աւազակներու քարայր ըրիք զայն»:

Կոյրեր ու կաղեր եկան իրեն՝ տաճարին մէջ, եւ բուժեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան անոր գործած սքանչելիքները, եւ մանուկները որոնք տաճարին մէջ կ'աղաղակէին. «Ովսաննա՛ Դաւիթի Որդիին», ընդվզեցան եւ ըսին անոր. «Կը լսե՞ս ինչ կըսեն ատոնք»: Յիսուս ըսաւ անոնց. «Այո՛, բնաւ չէ՛ք կարդացած գրուածը. “Երախաներուն ու ծծկերներուն բերանով զովաբանութիւն կատարեցիր”»: Ապա ձգեց զանոնք, գնաց քաղաքէն դուրս՝ Բեթանիա, ու կեցաւ հոն գիշերը:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 20-29 21-17

Sight for the Blind

As they were leaving Jericho, a large crowd followed Him. And two blind men sitting by the road, hearing that Jesus was passing by, cried out, “Lord, have mercy on us, Son of David!” The crowd sternly told them to be quiet, but they cried out all the more, “Lord, Son of David, have mercy on us!” And Jesus stopped and called them, and said, “What do you want Me to do for you?” **They said to Him, “Lord, we want our eyes to be opened.”** Moved with compassion, Jesus touched their eyes; and immediately they regained their sight and followed Him.

The

Triumphal

Entry

When they had approached Jerusalem and had come to Bethphage, at the Mount of Olives, then Jesus sent two disciples, saying to them, “Go into the village opposite you, and immediately you will find a donkey tied *there* and a colt with her; untie them and bring them to Me. “If anyone says anything to you, you shall say, ‘The Lord has need of them,’ and immediately he will send them.” This took place to fulfill what was spoken through the prophet:

“SAY TO THE DAUGHTER OF ZION, ‘BEHOLD YOUR KING IS COMING TO YOU, GENTLE, AND MOUNTED ON A DONKEY, EVEN ON A COLT, THE FOAL OF A BEAST OF BURDEN.’”

The disciples went and did just as Jesus had instructed them, and brought the donkey and the colt, and laid their coats on them; and He sat on the coats. Most of the crowd spread their coats in the road, and others were cutting branches from the trees and spreading them in the road. The crowds going ahead of Him, and those who followed, were shouting, “Hosanna to the Son of David; BLESSED IS HE WHO COMES IN THE NAME OF THE LORD; Hosanna in the highest!”

When He had entered Jerusalem, all the city was stirred, saying, “Who is this?” And the crowds were saying, “This is the prophet Jesus, from Nazareth in Galilee.”



Christ Cleansing the Temple

Cleansing the Temple

And Jesus entered the temple and drove out all those who were buying and selling in the temple, and overturned the tables of the money changers and the seats of those who were selling doves. And He said to them, “It is written, ‘MY HOUSE SHALL BE CALLED A HOUSE OF PRAYER’; but you are making it a ROBBERS’ DEN.”

And *the* blind and *the* lame came to Him in the temple, and He healed them. But when the chief priests and the scribes saw the wonderful things that He had done, and the children who were shouting in the temple, “Hosanna to the Son of David,” they became indignant and said to Him, “Do You hear what these children are saying?” And Jesus said to them, “Yes; have you never read, ‘OUT OF THE MOUTH OF INFANTS AND NURSING BABIES YOU HAVE PREPARED PRAISE FOR YOURSELF’?” And He left them and went out of the city to Bethany, and spent the night there.

Հիսուս Քրիստոսի Համբարձման տոն

Տոնը նշվում է Քրիստոսի Հարության 40-րդ օրը, 35 օրվա շարժունակությամբ՝ ապրիլի 30-ից մինչև հունիսի 3-ը՝ հինգշաբթի: Հարությունից հետո Քրիստոս 40 օր մնում է երկրի վրա ել երեւում էր աշակերտներին: Այդ ընթացքում Հիսուս էր վարդապետությունն ուսացանում էր նրանց, իսկ վերջին հանդիպման ժամանակ օրհնում ու պատգամներ էր տալիս առաքյալներին, որից հետո համբարձվում երկինք:

Քրիստոսի Համբարձման մասին վկայում են Մարկոս եւ Ղուկաս ավետարանիչները, վկայություններ կան նաեւ Գործք Առաքելոցում. «Եւ Ինքը՝ Տէր Հիսուս, նրանց հետ խոսելուց հետո, դեպի երկինք վերացավ եւ նստեց Հոր աջ կողմը» (Մարկ. 16:19): Հայ Առաքելական Եկեղեցում մայիսի 1-ը հիշատակվում է նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Միս քաղաքից Մայր Աթոռ Սբ. Էջմիածին փոխադրելու օր:

Պատմության թելադրանքով 484 թվականից Հայաստանի տարբեր վայրերում հանգրվանած Հայրապետական Աթոռը 1441 թվականին Վաղարշապատի ազգային-եկեղեցական ժողովի որոշմամբ մեկընդմիջտ վերահաստատվում է Լուսավորչահիմն Սբ. Էջմիածնում: Ի հիշատակություն պատմական այդ օրվա՝ Սբ. Էջմիածնում Համբարձման տոնի առթիվ մատուցվող Սբ. Պատարագի ընթացքում Իջման Ս. Սեդանի առջև կատարվում է նաև Հայրապետական մաղթանք: Քրիստոսի Համբարձման տոնն ուղեկցվում է նաև ժողովրդական հանդիսություններով և կոչվում է Ջանգյուլում (գյուլ՝ նշանակում է վարդ, ծաղիկ): Հնում Համբարձման օրվա տոնակատարություններն սկսվում էին չորեքշաբթիից: Կանայք այդ օրն անվանում էին «Ծաղկամոր կիրակի»:

Ծաղկամայրն, ըստ ավանդության, քրիստոնյա Վարվառե կույսն է, որը փախչելով կռապաշտ հորից, ապաստանում է Աշտարակի մոտ գտնվող Արայի լեռան քարանձավում: Հայրը հետապնդում է աղջկան, գտնում, ուր նա ապաստանել էր և սպանում դստերը: Նահատակվելուց առաջ Վարվառեն խնդրում է Աստծուց, որ ծաղիկ և կարմրուկ հիվանդություններ ունեցող մանուկները բժշկվեն իր անունով: Աստված կատարում է նրա խնդրանքը, և Վարվառեի բարեխոսությունը խնդրող ծնողների զավակներն ազատվում են այդ հիվանդություններից: Այդ քարանձավը դարձել է ուխտատեղի: Քարանձավի պատերից մշտապես ջուր է հոսում, որն ունի բուժիչ հատկություն: Ժողովուրդն հավատացած է, որ այդ ջուրը Վարվառե կույսի արցունքներն են:

Տոնը Հայաստանի տարբեր շրջաններում յուրովի է նշվում: Սակայն նախապես կատարվում է ծաղկահավաք: Տոնի ժամանակ ամենուրեք կատարվում է վիճականահություն և պարզվում, թե տվյալ տարում որ աղջիկն է ամուսնանալու: Տոնի օրը ջրով լի կուժերի մեջ զցում են ծաղիկների տերևներ և աղջիկներին պատկանող զանազան իրեր: Այնուհետև դեռահաս մի աղջկա հագնում են հարսի զգեստ, վերցնում կժերը, ծաղիկները և շրջում տնետուն: Այս ամենը գուգորդվում են երգերով, կատակներով և դրամահավաքով: Հետո սկսվում է վիճակահանությունը, ում պատկանում է առաջին իրը, նրան մոտալուտ ամուսնություն է սպասվում: Կժից հանում են մյուս իրերը, որոնց պատկանող անձանց խրատներ և բարեմաղթանքներ են տրվում:

Մինչ օրս, մասնավորապես Էջմիածնում և հարակից գյուղերում պահպանվել է այս գեղեցիկ ավանդույթը:

Feast of Ascension of Our Lord Jesus Christ

The Armenian Church celebrates the Feast of the Ascension of Our Lord on the fortieth day following the Feast of the Glorious Resurrection of Our Savior Jesus Christ.

Following His Resurrection and defeat of death, Christ remained on earth for forty days, and continued to appear to His disciples. On the fortieth day, Christ is seen by His disciples for the last time. He blesses them and leaves them with instructions, after which He ascends into heaven.

Two of the Gospel writers, St. Mark and St. Luke, testify about Christ's ascension. There is also an account of it in the Acts of the Apostles.

Following a final meeting of Christ with the eleven remaining apostles, St. Mark writes, "So then, after the Lord had spoken unto them, he was received up into heaven, and sat on the right hand of God." (Mark 16:19)

St. Luke gives a little greater detail as he writes, "And he led them out as far as to Bethany, and he lifted up his hands, and blessed them. And it came to pass, while he blessed them, he was parted from them, and carried up into heaven. And they worshipped him, and returned to Jerusalem with great joy, and were continually in the temple, praising and blessing God. Amen." (Luke 24: 50-53)

But by far the most beautiful account of the Ascension can be found in the Book of Acts: "And when he had spoken these things, while they beheld, he was taken up; and a cloud received him out of their sight. And while they looked steadfastly toward heaven as he went up, behold, two men stood by them in white apparel; which also said, Ye men of Galilee, why stand ye gazing up into heaven? This same Jesus, which is taken up from you into heaven, shall so come in like manner as ye have seen him go into heaven." (Acts 1:9-11)

The hymn that is sung in the Armenian Church on Ascension Day mentions the miraculous event of Christ's Ascension into heaven and the descent of the Holy Spirit on the Apostles.

In the Armenian Church, the day of Jesus Christ's Ascension is also commemorated for another reason as well. On this date in 1441, the See of the Catholicosate of All Armenians was returned to its historical origins. Following a resolution of the National Assembly gathered in Vagharshapad, the Patriarchal See was relocated from the city of Sis in Western Armenia to the Mother See of Holy Etchmiadzin. Following his vision of Christ striking the ground with a golden hammer, St. Gregory the Illuminator had founded the Cathedral of Holy Etchmiadzin in 303. However, less than 200 years later, in 484, the Patriarchal See was forced to relocate, and for the next 1000 years, settled in various cities throughout Armenia. The decision to return the throne of the Catholicos to the Mother See of Holy Etchmiadzin was the fulfillment of a national dream for the Armenian people.

Երկրորդ Ծաղկազարդ

Քրիստոսի Համբարձման տոնին հաջորդող կիրակի օրը Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Երկրորդ Ծաղկազարդը: Տոնի անվանումն առաջացել է Զատիկի՝ Սբ. Հարությանը նախորդող Ծաղկազարդի տոնի անվանումից: Վերջինս խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, երբ մարդիկ Տիրոջը դիմավորում էին փառաբանությամբ ու ցնծությամբ եւ ծառերի ճյուղեր սփռում Նրա առաջ:

Երկրորդ Ծաղկազարդն արդեն համբարձյալ Քրիստոսի Վերին Երուսաղեմ մտնելու հիշատակն է, երբ Նրան ցնծությամբ դիմավորում էին հրեշտակները: Ավանդության համաձայն՝ Վիրապում բանտարկված Սբ. Գրիգոր Լուսավորչին ամեն օր այցելում էր հրեշտակը: Մի օր նա բացակայում է: Հաջորդ օրը Սբ. Գրիգորը հարցնելով պատճառը, իմանում է, որ Համբարձման ժամանակ Հիսուս Քրիստոս անցել է հրեշտակների դասերի միջով: Լուսավորչին այցելող հրեշտակը չորրորդ դասից էր եւ Համբարձման չորրորդ օրը հրեշտակների այդ դասն ամեն տարի տոնում էր Քրիստոսի Համբարձվելը երկինք: Հայ Առաքելական Եկեղեցու մեծ աստվածաբան Գրիգոր Տաթևացու մեկնության համաձայն, բացի հրեշտակաց ամենաստորին դասից, որոնք էլ հենց ծառայում էին Քրիստոսին Նրա երկրավոր կյանքում, հրեշտակների մյուս դասերը չգիտեին Տիրոջ փրկարար տնօրինության մասին մինչեւ Համբարձումը:

Համբարձման ժամանակ, երբ Տերն անցնում էր հրեշտակների դասերի միջով, նրանք զարմացած հարցնում էին, թե ո՞վ է այս հզոր թագավորը, իսկ Քրիստոսին ուղեկցող ստորին դասի հրեշտակները բացատրում էին ամեն ինչ: Հրեշտակների այս երկխոսությունը Աստվածաշնչի Մաղմոսաց գրքում է. «Ո՞վ է այս փառքի արքան, - կարողությամբ հզոր Տերն է նա, պատերազմում զորեղ Տերը: Վեր քաշեցեք, իշխաններ, դռները ձեր, թող բացվեն հավիտենական դռները, եւ փառքի արքան թող ներս մտնի» (Մաղմ. 23:8-9):

Նույն այս հարց ու պատասխանը նաև Սբ. Պատարագի արարողության ընթացքում կատարվող վերաբերումի մաս է կազմում: Երկրորդ Ծաղկազարդը քրիստոնյաներին վերստին հիշեցնում է Քրիստոսի Համբարձումը եւ մահվանից հետո երկնքում, Աստծո ներկայությամբ երանություն վայելելու հույս պարզեւում:

Second Palm Sunday

On the Sunday following the Feast of the Ascension of Our Lord, the Armenian Church celebrates “Second” Palm Sunday. The name of the feast has been derived from Palm Sunday, which precedes Easter. In the week leading up to His betrayal, crucifixion and resurrection, the “first” Palm Sunday symbolized the triumphant entry of Christ into Jerusalem where people met Him with great joy and glorified His Holy Name. The Second Palm Sunday is the commemoration of the triumphant entry of the Ascended Christ into the Heavenly Jerusalem, where the angels meet him with great happiness and delight.

According to tradition, during St. Gregory the Illuminator’s imprisonment in the pit, he was visited every day by the same angel. However one day, the angel did not come. The following morning, St. Gregory inquires to the reason for his absence, to which the angel responds that during the Ascension, Christ had passed through the ranks of the Angels, and they celebrate that feast each year. The angel visiting St. Gregory was from the fourth class of angelic hosts, and thus, on the fourth day following the Ascension, his rank of angels commemorates and celebrates Christ’s Ascension to heaven every year.

St. Gregory of Datev, one of the greatest theologians of the Armenian Church, has a famous interpretation of this event. Prior to His Ascension, the ranks of angels, except for the lowest class, who served Christ during His earthly life, were not aware of Christ’s incarnation for the salvation of man. St. Gregory’s commentary states that when the Lord was passing through the ranks of angels, they were surprised and asked, “Who was that powerful king?” The angels accompanying Christ thus informed them. This dialogue of angels is presented in the Holy Bible, in the book of Psalms:

“Lift up your heads, O ye gates; and be ye lifted up, ye everlasting doors; and the King of glory shall come in.”

“Who is this King of glory? The LORD strong and mighty, the LORD mighty in battle.”

“Lift up your heads, O ye gates; even lift them up, ye everlasting doors; and the King of glory shall come in.”

“Who is this King of glory?”

“The LORD of hosts, he is the King of glory.” (Psalms 24:7-10).

The angelic dialogue is exhibited for us, when it is heard during the Divine Liturgy, as the deacon approaches the celebrant priest with the chalice during the Great Entrance (Verapehroom).

Second Palm Sunday is one more reminder of the Ascension of Christ and grants us the hope for ascending to heaven after our deaths, and being in the bliss of God’s presence.

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴ. ՅՈԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հավատքով ընկալված աստվածային անտեսանելի շնորհների ստացման տեսանելի նշաններ՝ արտահայտված արտաքին ծեսի, աստվածապաշտական արարողությունների միջոցով: Խորհուրդներով, ինչպես և մյուս ծեսերով ու արարողություններով, եկեղեցին իրագործում է իր փրկագործական առաքելությունը. անհատը դառնում է եկեղեցու իսկական և միակից անդամ և հաղորդակցվում Հիսուս Քրիստոսի հետ: Աստվածաբանական ձևակերպմամբ՝ խորհուրդները եկեղեցական այն արարողություններն են, որոնց միջոցով հավատացյալն ընդունում է Սուրբ Հոգու շնորհները, տեսանելի գործողությունների, խոսքերի և անձերի (խորհուրդների մատակարարում) միջոցով հարաբերության մեջ մտնում գաղտնի ու անտեսանելի երևույթների, հոգևոր ուժերի և կարողությունների հետ:



Առաջին անգամ խորհուրդ բառի իմաստը ներկայիս ըմբռնմամբ ձևակերպել է IV–V դդ. աստվածաբան Օգոստինոս Երանելին՝ որպես «տեսանելի նշան անտեսանելի շնորհի»։ Նոր կտակարանում խորհուրդ բառը հիշվում է իր նախնական իմաստով և նշանակում է ծածկված, վարագուրված, գաղտնիք: Պողոս առաքյալը խորհուրդ բառը գործածել է անցյալում անծանոթ մնացած ու հետո Ավետարանով հայտնված ճշմարտությունը ցույց տալու (Կողոս. 1.26–27), երբեմն էլ՝ երևույթի թաքուն իմաստը մատնանշելու համար. «Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ» (Եփես. 5.32): Պողոս առաքյալն այս իմաստով է հաճախ գործածել խորհուրդ բառը, երբ ասել է՝ «Ավետարանի խորհուրդը», «Քրիստոսի խաչի խորհուրդը», «Քրիստոսի խորհուրդը», «մարդկության խորհուրդը» և այլն:

Աստվածաշնչում գործածված խորհուրդ բառը երբեք չի համապատասխանել իր այսօրվա նշանակությանը: Եկեղեցու ս. հայրերի տնօրինությամբ խորհուրդը քրիստոնեական մասնավոր նշանակություն է ստացել՝ ցույց տալով քրիստոնեական արարողությունների արտաքին ձևի մեջ թաքնված միտքը և խորհրդավոր ներգործությունը, որոնց միջոցով հավատացյալ քրիստոնյան ընդունում է աստվածային շնորհներ: Հայ եկեղեցին [ինչպես և Կաթոլիկ և Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիները] ունի յոթ խորհուրդ. Մկրտություն, Դրոշմ, Ապաշխարություն, Հաղորդություն, Պսակ և Ամուսնություն, Ձեռնադրություն, Կարգ հիվանդաց և վերջին օծում: Անգլիկան եկեղեցին ևս ընդունում է այս յոթ խորհուրդները, բայց տարբերվում է իր մեկնաբանություններով: Բողոքական եկեղեցիների մեծ մասը միայն երկու խորհուրդ է ընդունում (Մկրտությունը և Հաղորդությունը), մյուսները՝ երեք (նաև Ձեռնադրությունը):

Յուրաքանչյուր խորհուրդ ունի իր առանձին, էական նշանակությունը և ներքին բովանդակությունը: Մկրտությունը հավատքի խորհուրդն է, Դրոշմը՝ հույսի, Հաղորդությունը՝ սիրո և խաղաղության, Ապաշխարությունը՝ արդարության և մաքրության, Ձեռնադրությունը՝ հոգևոր կոչումի, շնորհի ու իմաստության ստացման, Պսակը՝ ողջախոհության և մաքուր կյանքի, Վերջին օծումը՝ հավիտենական կյանքի ժառանգության և հոգու փրկության: Անմիջականորեն Հիսուս Քրիստոսի հաստատած խորհուրդները երկուսն են՝ Մկրտությունը և Հաղորդությունը, իսկ մնացած հինգը, ունենալով սուրբգրային հիմք, միջին դարերից եկող ավանդության և եկեղեցու զարգացման արդյունք են: Դրանց վերջնական ձևավորումը վերագրվում է XII դ. եկեղեց. հայրերին: Այդ դարից սկսած Հայ եկեղեցին ևս որդեգրել է յոթխորհուրդները:

Խորհուրդների բովանդակության վերաբերյալ ժամանակին մեկնաբանություններ են շարադրել Խոսրով Անձևացին, Ներսես Լամբրոնացին, Մովսես Երզնկացին, Հովհաննես Արճիշեցի Ոսպնակերը (XIII–XIV դդ.): Հայերեն Խ-Պ. առաջին անգամ տպագրել է Հակոբ Մեղապարտը, 1513-ին, Վենետիկում:

Աղբյուր՝ Ք.Հ. հանրագիտարան, հեղինակ՝ Հակոբ Քյուսեյան

4: Հոգեհանգիստ - Memorial Service

A memorial service at St Yeghiche Armenian Church is requested:

By St Yeghiche Armenian Church Parish for each of the **22 Innocent Souls**, the victims of the Manchester Bombing. Their untimely departure has been felt all over this country.

By St Yeghiche Armenian Church Parish for all the **Members of The Armenian Nation** who gave their life at Sartarabad battle from 21st to 29th May 1918 for the independence and glory of our Homeland

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

St Yeghiche Armenian Church is looking for people of all ages to be altar servers and choir members. If you would like to be in the choir and be uplifted by singing our beautiful "Sharagans" (hymns) just come to church on any Sunday.

Welcome: We wish to welcome those who are visiting our church.

The Parish Council would like to invite you to make St. Yeghiche Armenian Church your spiritual home. You are cordially invited to take part in the Service and activities of our Church.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

Please remember our Church in your prayers.

ANNOUNCEMENT:

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to arrange a standing order/make a donation £to the St Yeghiche Arm. Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....